«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 077484554,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
Նախարար **Սուրեն Պապիկյանին**

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,
հեռ.՝ 077 484-554)

Հարգելի պարոն **Պապիկյան**,
համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

Գեղարքունի մարզի Զոլաքար համայնքի ավգանու և համայնքի ղեկավարի որոշումները հրապարակված չեն ո՛չ համայնքապետարանի կայքում և ո՛չ էլ մարզպետարանի կայքում: 27.02.2020 թ–ին գրավոր դիմել եմ համայնքի ղեկավար Արման Ղազարյանին և խնդրել եմ, որ տրամադրի 2015-2020 թթ ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները: Մինչ օրս որոշումները չեմ ստացել:
Հաշի առնելով վերոգրյալը, խնդրում եմ՝

1. Տրամադրեք 2015 թ–ի հունվարի 1-ից մինչեւ 2020 թ–ի փերվարի 27–և ընկած ժամանակահատվածում Զոլաքար համայնքի ղեկավարի կողմից ընդունված բոլոր որոշումների պատճենները:
2. Տրամադրեք 2015 թ–ի հունվարի 1-ից մինչեւ 2020 թ–ի փերվարի 27–ը ընկած ժամանակահատվածում Զոլաքար համայնքի ավագանու կողմից ընդունված բոլոր որոշումների պատճենները:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել **էլեկտրոնային** տարբերակով: (Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝ Տիրայր Մուրադյան

25 ապրիլի 2020 թ.